ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

№ 2

8.04.26թ

# ՈՐՈՇՈՒՄ N 2

## «ԱՐՍԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիր ատուի անվանում ը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեութ յան հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքնե րի առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| «ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/10» | 15 | Անալիզատորի ռեագենտներ ABB Navigator 600 silica | 1 600 000 | «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 01091058 | ք. Երևան,Նոր Նորք, Մոլդովակա ն 60 0062, | 07.04.2026թ. | «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ | Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 36-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետով մերժել «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ հայտը 15-րդ և 16-րդ չափաբաժիններով:<br>«ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները:<br>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ կետի պահանջները՝ սույն գնման ընթացակարգը 15-րդ և 16-րդ չափաբաժիններով հայտարարել չկայացած: | Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 2-րդ մասով և 10-րդ հոդվածով՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը, Պատվիրատուն ծանուցել է ընտրված Մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:<br>Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Մասնակցին տրվել է հինգ աշխատանքային օր ժամկետ՝ վերջինիս կողմից հաստատված պայմանագիրը և որակավորման, պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված տուժանքի ձևով ներկայացնելու համար, սակայն վերջինիս կողմից հաստատված պայմանագիրը չի կցվել համակարգ, իսկ որակավորման ապահովումները չեն ներկայացվել:<br>Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ապա նա |
| | 16 | pH էլեկտրոդ | 2 944 722 | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: խախտում: Ելնելով վերոգրյալից մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, ուստի Հանձնաժողովը 2026թ. ապրիլի 7-ին տեղի ունեցած նիստում որոշում է կայացրել մերժել Մասնակից «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը և 15-րդ և 16-րդ չափաբաժինները հայտարարվել է չկայացած: |

Գլխավոր տնօրենի ժ/պ Գ. Պողոսյան

**Կատարող՝ Մատակարարման և Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ, Ն. Փարսադանյան**
**Հեռ. 011 47 26 11**